

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ»
ՆԳՆ կրթահամալիրի ղեկավար
Մ. Մուրադյան
2025 թ.
ԿԱՐԾԻՔ

**Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝
Եղիշե Իշխանի Բազայանի՝ «Պառլամենտական վերահսկողության
էությունը և ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի
Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք»
(սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ,
բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուստիկանական ուսումնական ստորաբաժանման
ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը, մասնակցությամբ՝
իրավաբանական գիտությունների թեկնածու Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական
գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի, իրավաբանական գիտությունների
թեկնածու Լ. Ա. Ղազանչյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա.
Խառատյանի և Ա. Գ. Սաֆարյանի քննարկեց Եղիշե Իշխանի Բազայանի՝
«Պառլամենտական վերահսկողության էությունը և ժամանակակից հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք»
(սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական,
եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

2015թ. սահմանադրական փոփոխություններով Հայաստանի
Հանրապետությունն անցում կատարեց խորհրդարանական կառավարման ձևի, որը
նոր նախադրյալներ ստեղծեց պառլամենտարիզմի և խորհրդարանական
կառավարման համակարգի արդյունավետ զարգացման համար: Մեր դիտարկմամբ,
խորհրդարանական վերահսկողության նպատակը կառավարության գործունեության
թափանցիկության և պատասխանատվության բարձրացումն է: Հաշվի առնելով

խորհրդարանի և կառավարության միջև հարաբերությունների բնույթը՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված «պառլամենտական վերահսկողություն» եզրույթի սահմանմանը, վերջինիս էության, հատկանիշների բացահայտմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ Սահմանադրությամբ ամրագրված վերահսկողական լիազորությունների և դրանց իրականացման փաստացի հնարավորությունների հարաբերակցության հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, տասներկու ենթագլուխ պարունակող երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի նախաբանում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի գիտական հետազոտման աստիճանը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանությունը, գիտական նորույթը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ «Պառլամենտական վերահսկողության տեսական և պատմական հիմնահարցերը պետական վերահսկողության համատեքստում» վերտառությամբ գլխում հեղինակը հանգամանալից ներկայացրել է պառլամենտական վերահսկողության հասկացությունը, բնորոշ գծերը, զարգացման փուլերը, պառլամենտական վերահսկողության ինստիտուտի ձևավորումը, ինչպես նաև պառլամենտական վերահսկողության տեսաիրավական բնութագիրը:

Ատենախոսության երկրորդ՝ «Պառլամենտական վերահսկողության տեսակները, ձևերը և դրանց կարգավորման ու կիրառման հիմնախնդիրները» վերտառությամբ գլխում հեղինակը նախ՝ ներկայացրել է պառլամենտական վերահսկողության տեսակները, ձևերը և դասակարգման սահմանադրական հիմքերը, ապա՝ անդրադարձել և վերլուծության է ենթարկել Հայաստանի Հանրապետությունում հարցերի ու հարցապնդումների իրավակարգավորումը, պառլամենտական հետաքննության իրականացմանը և իմպիչմենտի ինստիտուտի կարգավորմանը վերաբերելի հիմնադրույթները:

Ատենախոսության երրորդ՝ «Պառլամենտական վերահսկողության համակարգի զարգացման դինամիկան և դրա կատարելագործման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ գլխում հեղինակը ներկայացրել է վերլուծել է Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրական զարգացման առանձնահատուկություններն, իշխանությունների տարանջատմանը որպես պառլամենտական վերահսկողության իրականացման հիմք, անդրադարձել պառլամենտական վերահսկողության ձևերի համակարգային վերակառուցմանը:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Առկա են բովանդակային տարբերություններ ատենախոսության բովանդակության և ատենախոսության պարագրաֆի վերնագրերի միջև: Դիտարկումը վերաբերում է բովանդակության 1-ին գլխի 1-ին պարագրաֆի «Պառլամենտական վերահսկողության հասկացությունը և բնորոշ գծերը» (էջ 2) և 1-ին գլխի 1-ին պարագրաֆի «Պառլամենտական վերահսկողության որպես կառավարման գործառույթի հասկացությունը և բնորոշ գծերը» (էջ 14) վերնագրերի ձևակերպումներին:

2. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող չորրորդ դրույթը: Մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ հեղինակի կողմից առաջարկվող պառլամենտական վերահսկողության արդյունավետության վրա ազդող հանգամանքների շարքում գործադիրի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մոտիվացիան դիտարկել կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման հիմնախնդրի լուծման հետ մեկտեղ, որը, հնարավորություն կտար Ազգային ժողովին արդյունավետ իրականացնել իր գործառույթները՝ հաշվի առնելով ընդդիմության դիրքորոշումը: Միաժամանակ նույն դրույթի շրջանակներում, հեղինակը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ օրենսդիր մարմնում քաղաքական մեկ ուժի ներկայացուցիչները մեծամասնություն են և որպես հակակշիռ առաջարկում է սահմանադրական կարգավորմամբ իրավական կարգավիճակ և հատուկ իրավունքներ ունեցող պառլամենտական ուժեղ ընդդիմության առկայություն: Ըստ էության, առաջարկվող դրույթը տեղավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ գլխի հոդվածների (89-րդ, 104-րդ) տրամաբանության մեջ և չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

3. Ատենախոսության պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթի շրջանակներում հեղինակը անդրադարձել է սահմանադրական իրավիճակը ձևավորող գործոնների ազգային հատկանիշների կազմով պայմանավորված կառավարման ձևին՝ ժխտելով այն տեսակետը, որ որևէ երկրի կառավարման ձև չի կարող հարյուր տոկոսով օրինակելի մոդել դառնալ: Հարկ է նշել, որ թվարկած հետազոտության արդյունքներն ընդհանուր բնույթի տեսական դիտարկումներ են և կարող էին ներառվել ատենախոսության «Եզրակացություն» բաժնում:

4. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, առանձնացված չեն ատենախոսության՝ «Նորմատիվ իրավական ակտեր» և «Մասնագիտական գրականություն» բաժինները: Նպատակահարմար կլիներ աղբյուրները դասավորել՝ համաձայն գրականության ցանկի տվյալ բաժնի անվանման՝ ապահովելով միասնական մոտեցում: Միաժամանակ, «Գրականության ցանկ» բաժնում վկայակոչված չէ 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, իսկ 3-րդ կետում հեղինակը, որպես նորմատիվ իրավական ակտ է ներառել միայն 2002 թվականի փետրվարի 20-ին ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը, մեր դիտարկմամբ, հիմնավորված մոտեցում չէ, քանի որ ատենախոսության տեքստում քանիցս մեկնաբանված են թե՛ 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, թե՛ 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի

Հանրապետության սահմանադրական օրենքի վերաբերելի դրույթները: Բացի այդ, նշված չեն ներկայացված աղբյուրների Հայաստանի Հանրապետության պաշտոնական կամ գերատեսչական ակտերի տեղեկագրի հերթական և ընդհանուր համարները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Եղիշե Իշխանի Բազոյանի՝ «Պառլամենտական վերահսկողության էությունը և ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Եղիշե Իշխանի Բազոյանը արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Եղիշե Իշխանի Բազոյանի՝ «Պառլամենտական վերահսկողության էությունը և ժամանակակից հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի 2025 թ. նոյեմբերի 4-ի նիստում, արձանագրություն թիվ 6 :

Ամբիոնի պետ



Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր



Ա. Է. Սուքիասյան